ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

157 (2823)

7 Նոյեմբերի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ԴԱՏԱՎՈՐ ՉԻՉՈՅԱՆԻ ԿԱՄԿԱԾԵԼԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ժորա Չիչոյանը պաշտոնի նշանակվել է 2022 թվականի սեպտեմբերի 15-ին, իսկ հայտարարագիր ներկայացրել է մարտի 9-ին: Դատավոր Չիչոյանը հայտարարագրել է 2 բնակարան բազմաբնակելի շենքում եւ մի հողամաս. անշարժ գույքը ժառանգություն է ստացել Չիչոյանը: Բնակարաններից մեկը գտնվում է Երեւանի Արաբկիր վարչական շրջանում, իսկ մյուսը՝ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքում, հողամասը Շողակաթ համայնքում է: Չիչոյանը տրանսպորտային միջոց չի հայտարարագրել: Նրա բանկային ավանդները կազմել են 6 մլն դրամ, կանխիկ դրամական միջոցները՝ 18 մլն դրամ եւ 20 հազար դոլար: Դատավոր Չիչոյանն ունի նման ֆինանսական միջոցներ, սակայն նրա տարեկան եկամուտները կազմում են 4 մլն 667 հազար դրամ: Եկամուտներից 2 մլն 95 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ բարձրագույն դատական խորհրդից, 2 մլն 80 հազարը աշխատանքի վարձատրություն է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունից, իսկ 492 հազար դրամը վարկ է «Էվոկա» բանկից: Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 4 մլն 514 հազար դրամ: Անհասկանալի է մնում եւ կասկածելի թվում, թե ինչպես է Չիչոյանը տարեկան եկամտի չափին հասնող վարկային միջոցները մարում: Նաեւ հետաքրքիր փաստ կարող է դիտվել այն, որ դատավորի կանխիկ դրամական միջոցները 6,5 անգամ գերազանցում են նրա տարեկան եկամուտները: Նա նաեւ չի նշել այս գումարների ստացման աղբյուրները, ինչը կարող է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մոտ կասկած առաջացնել, եւ ԿԿՀ-ն որոշում կայացնի վարույթ հարուցելու: Հիշեցնենք, որ Ժորա Չիչոյանը 44-օրյա պատերազմում զոհված զինծառայող Ժորա Մարտիրոսյանի մորը՝ Գայանե Մարտիրոսյանին կալանքի տակ վերցնելու որոշում կայացրած դատավորն է: Այս որոշումից հետո մամուլը գրեց, որ դեռեւս մեկ տարի առաջ ՀՀ նախագահն առարկություն էր ներկայացրել Ժորա Չիչոյանին դատավոր նշանակելու մասով ՀՀ բարձրագույն դատական խորհուրդ, որը ԲԴԽ-ն ընդունել էր ի գիտություն, սակայն ԲԴԽ-ում դատավոր հորեղբոր՝ Սերգեյ Չիչոյանի եւ իր հոր՝ Շիրակի մարզի դատախազ Արմեն Չիչոյանի գործուն ջանքերով ԲԴԽ-ն հաշվի չառավ նախագահի առարկությունը, Ժորա Չիչոյանին նշանակեց դատավոր: Իշխանության «սրտի դատավոր» Ժորա Չիչոյանն էլ, որ քար չգցի իր հոր՝ Շիրակի մարզի դատախազ Արմեն Չիչոյանի կարիերայի վրա, հորեղբոր՝ դատավոր Սերգեյ Չիչոյանին չվնասի, կամ հորեղբոր փեսայի՝ Անուշավան Մուշեղյանի համար խնդիրներ չստեղծի (որը նույնպես դատավոր է), կալանքի տարավ զոհվածի մորը:

Օրեր առաջ մամուլը գրել էր, որ Երեւանի քաղաքապետարանի շինարարության եւ բարեկարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Խորեն Գրիգորյանը, սեփական դիմումի համաձայն, ազատվել է աշխատանքից: Վերջինս, սակայն, հաջորդ օրը ֆեյսբուքյան իր էջում գրեց, թե ազատման դիմում չի գրել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նրա՝ աշխատանքից ազատման շուրջ լուրջ խմորումներ են գնացել քաղաքապետարանում: Բանն այն է, որ Տիգրան Ավինյանը փոխքաղաքապետերի նշանակումից հետո բաժանումներ է արել, թե նրանցից ով որ ոլորտը պետք է համակարգի: Ըստ այդմ, փոխքաղաքապետ Լեւոն Հովհաննիսյանը պետք է քաղշին ոլորտը վերահսկեր: Եւ, ահա, Լեւոն Հովհաննիսյանն իր մոտ է կանչել Խորեն Գրիգորյանին ու ասել, որ այսուհետ պետք է հաշվետու լինի իրեն, պահանջել է նաեւ այսուհետ իրեն ցույց տալ շինթույլտվությունների վերաբերյալ բոլոր փաստաթղթերը: Մշտապես ինքնագործունեությամբ զբաղվող Խորեն Գրիգորյանին դուր չի եկել, որ իրեն պետք է այսուհետ վերահսկի Հովհաննիսյանը, եւ նա «սպառնացել է», թե ազատման դիմում կգրի: Այդ խոսակցության ընթացքում Հովհաննիսյանի աշխատասենյակում թեժ կռիվ է սկսվել: Ավելի ուշ Տիգրան Ավինյանն իր մոտ է կանչել Լեւոն Հովհաննիսյանին եւ Խորեն Գրիգորյանին ու ասել է՝ պետք է մի կողմ դնեն տարաձայնությունները ու նորմալ աշխատեն միասին: Ինչպես մեր աղբյուրներն են փոխանցում, այդ օրը՝ մինչեւ ուշ ժամ, քաղաքապետարանում լարված իրավիճակ է եղել: Երկար խոսակցություններից հետո Խորեն Գրիգորյանը հետ է կանգնել իր «սկզբունքային» որոշումից: Ինչպես մեր աղբյուրներն են փոխանցում, թեեւ իրավիճակը ժամանակավորապես հարթվել է, բայց Հովհաննիսյան-Գրիգորյան հարաբերությունները մի օր պայթելու են:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ օրերս իրավապահ մարմինները բերման են ենթարկել Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի նախկին թաղապետ, ՔՊ-ական Արման Բարխուդարյանին, կոմունալ բաժնի պետ Աշոտ Խաչատրյանին, առեւտրի բաժնի պետ Հրայր Արամյանին եւ կոմունալի աշխատակից Վան Հարությունյանին՝ գնումների գործընթացը ոչ պատշաճ կատարելու կասկածանքով: Ըստ տեղեկությունների՝ կասկածյալների ցանկում է նաեւ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի նախկին թաղապետ Սաշա Կատվալյանը, որն այժմ զբաղեցնում է Երեւանի քաղաքապետի խորհրդականի պաշտոնը: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Կատվալյանը նշել էր, որ կապ չունի այդ ամենի հետ, իրեն չեն կանչել հարցաքննության, եւ չնայած որ Բարխուդարյանն իր ընկերն է, եւ ինքը խորհուրդներով նրան պարբերաբար օգնել է, դա ոչինչ չի ենթադրում: «Ժողովուրդ» օրաթերթին ավելի ուշ տեղեկություններ հասան, որ Կատվալյանը ոչ միայն այս թեմաներին է առնչվում, այլ նաեւ խնամի-ծանոթ-բարեկամ «շարժմանն» է հարում: Մասնավորապես, ըստ մեզ հասած տեղեկությունների՝ Կատվալյանը «տեղավորել է» քաղաքապետարանում իր կնոջը՝ Շուշանիկ Ղեւոնդյանին՝ օգտագործելով իր պաշտոնեական դիրքը: ***Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:***

Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը խոստովանում է, որ նոր չափորոշիչներով դասագրքերի տպագրման եւ ստեղծման գործընթացը, ըստ էության, տապալել է: Ավելին՝ կառույցն այժմ փորձում է փրկել իրավիճակը: Բանն այն է, որ նախարարությունը նոր նախագիծ է ներկայացրել հանրային քննարկման, որով առաջարկում է հանձնաժողով ստեղծել: Հիմնավորման մեջ կառույցը խոստովանում է. «Դասագրքերի ստեղծման գործընթացի ավարտին պարզ դարձավ, որ, մասնավորապես, սահմանված կարգով ուսուցչական համայնքից ընտրված մասնագետների շտեմարանից ձեւավորված մասնագիտական խմբերում գիտականությանը, հանրակրթության պետական նոր չափորոշչին համապատասխանությանը, ինպես նաեւ բովանդակային այլ հարցերի ուսումնասիրությունը մասնագետների կողմից որոշ դեպքերում իրականացվել է ոչ պատշաճ կերպով՝ խախտելով ընթացակարգային պահանջները: Տպագրված դասագրքերում առկա խնդիրները բացառելու, հաջորդ ուսումնական տարվա համար տպագրվող դասագրքերը հնարավորինս պատշաճ ընթացակարգով իրականացնելու նպատակով սույն նախագծով առաջարկվում է ուսումնական նյութը յուրաքանչյուր փուլով անցկացնելու հստակ գործընթաց: Նախարարի հրամանով ստեղծված հանձնաժողովն իրականացնելու է ներկայացված ուսումնական նյութերի փորձաքննություն»: Այսինքն՝ խոստովանում են, որ խախտումներ եղել են, սակայն հիմա էլ որոշել են հանձնաժողով ստեղծել, որ պատասխանատվությունը հետագա ձախողման դնեն այդ խմբի վրա: Ըստ ամենայնի, դա էլ կտապալի նախարար Ժաննա Անդրեասյանը, պարզապես մտադիր է ի սկզբանե մեղավորներ փնտրել:

ԶՐՈՒՅՑ

ԻՆՉ ՄՈՏ ՈՉ ՈՔ ՉԻ ԿԱՐՈՂ «ՇՇԿՌՎԵԼ»

Օրերս հայտնի դարձավ, որ ԱԱԾ-ն բերման է ենթարկել Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի նախկին թաղապետ, ՔՊ-ական Արման Բարխուդարյանին եւ թաղապետարանի մի քանի աշխատակիցների: Նրանք, նախնական տվյալներով, մեղադրվում են խոշոր չափերի յուրացման համար:

«Ժողովուրդ» օրաթերթը այս առիթով զրուցել է նաեւ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի նորանշանակ ղեկավար, «Հանրապետություն» կուսակցության անդամ Ռոմիկ Մխիթարյանի հետ:

-Պարոն Մխիթարյան, մինչ պաշտոն ստանձնելը տեղյա՞կ էիք՝ ինչ է կատարվում վարչական շրջանում, տեղյա՞կ էիք՝ ինչ ժառանգություն եք ստանում:

-Բացարձակ տեղյակ չեմ եղել, նոր եմ սկսում ծանոթանալ: Դա իմ խնդիրն էլ չէ, իրավապահ մարմինները երեւի լրացուցիչ հայտարարություններ կանեն:

-Պարոն Մխիթարյան, իսկ կատարվածին ի՞նչ գնահատական կտաք. փաստացի Մալաթիա վարչական շրջանի ղեկավարությունը թաթախված է եղել կոռուպցիայի մեջ: Ի՞նչ եք անելու, որ վերահսկեք իրավիճակը, որպեսզի Ձեր պաշտոնավարման ժամանակ նման խախտումներ չլինեն:

-Ես երկուշաբթի օրվանից, երբ անցնեմ իմ բուն պարտականություններին, կհասկանամ՝ ինչ է կատարվում, ինչ է սպասվում, իրավապահների կողմից ինչ ընթացք է տրվում: Ըստ դրամ, եթե անհրաժեշտություն լինի, կկատարեմ անհրաժեշտ փոփոխություններ: Ամեն դեպքում, վարչական շրջանի աշխատակազմի աշխատանքները չեն դադարելու, նորմալ շարունակվելու են:

Միանշանակ կանխելու եմ. ես իմ ամբողջ կյանքը ծառայել եմ հայրենիքին եւ այդպես շարունակելու եմ: Ինձ մոտ ոչ ոք չի կարող «շշկռվել» ու ինչ-որ խախտումներ անել:

-Եթե վարչական շրջանի աշխատակիցները, որոնք նույնպես մեղադրվում են գումար յուրացնելու համար, արդարացվեն ու վերադառնան, շարունակելո՞ւ եք նրանց հետ աշխատել:

-Ես այսօր հանդիպել եմ վարչական շրջանի աշխատակազմի աշխատակիցների հետ եւ ասել եմ՝նա, ով իմ աշխատելաոճին, իմ տեմպին ու իմ մաքրությանը կդիմանա, նորմալ կաշխատի, կշարունակենք իրար հետ աշխատել, ով չէ, կարող է հեռանալ:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱԶԳԱԿԱՆԸ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԸ ԳՈՀ Է ԵՎ ԵՐՔԱՆԻԿ

ՔՊ-ական պատգամավոր Էդգար Հակոբյանը, որը հերքում է այն, որ իր կինը եւ Աննա Հակոբյանը մորաքրոջ աղջիկներ են՝ ասելով, որ Հակոբյան ազգանուն ունենալը դեռ չի նշանակում, որ իրենք բարեկամ են, պարզվում է՝ թշնամական հարաբերությունների մեջ է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի նախկին ղեկավար Արման Բարխուդարյանի հետ:

Հիշեցնենք, որ օրերս հայտնի դարձավ, որ իրավապահ մարմինները բերման են ենթարկել Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի նախկին թաղապետ, ՔՊ-ական Արման Բարխուդարյանին, կոմունալ բաժնի պետ Աշոտ Խաչատրյանին, առեւտրի բաժնի պետ Հրայր Արամյանին եւ կոմունալի աշխատակից Վան Հարությունյանին:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ համայնքապետարանը գնումների գործընթացը լիակատար չի կատարել, չարաշահումներ են հայտնաբերվել, այսինքն՝ հայտարարվել է մրցույթ, որից հետո նախատեսված գումարն իր նպատակին չի ծառայել, այդ գումարի մի մասը, այսպես ասած, մեջ-մեջ է արվել:

Ավելի ուշ իրավապահ մարմինները ստորագրությամբ ազատ արձակեցին բերման ենթարկվածներին:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը դեռ հուլիսի 7-ին գրել էր, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի գրասենյակի գործունեությունը դադարեցված է: ՔՊ գրասենյակի փաստացի լուծարման պատճառը դարձյալ ընտրակեղծիքներն են եղել:

Պարզվել էր, որ Մալաթիայում ՔՊ-ն թեւերի է բաժանված եղել. մի թեւն ուղղորդվել է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար Արման Բարխուդարյանի կողմից, մյուս թեւը՝ ՔՊ-ական պատգամավոր, վարչապետի տիկնոջ ազգական, Մալաթիա-Սեբաստիայի տարածքային կառույցի խորհրդի նախագահ Էդգար Հակոբյանի կողմից: ՔՊ տարածքային կառույցի խորհրդի նախագահի եւ անդամների ընտրությունների ժամանակ կողմերը իրենց ցանկալի մարդկանց ցուցակներ են տվել շարքային ՔՊ-ականներին, որպեսզի ընտրեն, եւ այդ կեղծիքը պատահաբար բացահայտվել է:

Կարծես թե պարոն Հակոբյանը գոհ է, որ իր «թիրախները» հայտնվել են իրավապահների ուշադրության կենտրոնում ու այս ամեն ինչից ելնելով՝ քեֆ-ուրախության մեջ է, ո՛չ ավել, ո՛չ պակաս, ՔՊ-ն գովազդող, ՔՊ-ի սիրելի երբեմնի գրող ու դերասան Գնել Սարգսյանի հետ:

ԻՆՉ ՑՈՒՑՄՈՒՆՔ ԵՆ ՏՎԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի է դարձել՝ «Աշտարակի ձոր»-ի աղմկահարույց կրակոցների գործով անցնող համայնքի ղեկավարները ինչ ցուցմունք են տվել ՀՀ քննչական կոմիտեում: Մեզ հասած լուրերի համաձայն՝ Ուշանի համայնքապետ Գրիգոր Հարությունյանն իր ցուցմունքում գրել է, որ, իբր, մեքենան խափանված է եղել Աշտարակի ձորի «Արեւիկ» ռեստորանի մոտակայքում, ինքը բեռնփոխադրող ընկերություն է կանչել, որ մեքենան տանեն: Տարածքում լսել է աղմուկ ու տեսել է՝ քաղաքապետի տեղակալը վիրավորված է, օգնության է հասել ու մեքենայով տարել է: Ասել է թե՝ նա իր ցուցմունքով փորձել է համոզել իրավապահներին, որ կռվի հետ կապ չունի: Ուշիի համայնքապետ Մարտին Մարտիրոսյանը ընդհանրապես գրել է, որ դեպքի վայրում չի եղել ու դեպքի ժամանակ մասնակցել է Աշտարակ քաղաքում հիշատակի նվիրված արարողության: Այսինքն՝ համայնքների ղեկավարները «գողական են գնում», ինչպես կասեր դասականը:

Սակայն նախաքննական մարմինը, կարծես թե, չի հավատացել նրանց, մեղադրանք է առաջադրել ու տնային կալանքի տակ է պահում: Մինչ օրս հարցաքննված չէ Աշտարակի քաղաքապետ Թովմաս Շահվերդյանը եւ կրակոցներից վիրավորված նրա տեղակալը. վերջինս դեռ հիվանդանոցում է: Ինչո՞ւ են իրավապահները խնայում քաղաքապետին, արդյոք հովանավորչությա՞մբ են զբաղված:

ArmLur.am-ը գրել էր՝ հոկտեմբերի 20-ին հայտնի դարձավ, որ Արագածոտնի մարզի «Աշտարակի ձոր» ռեստորանային համալիրից դեպի «Գալուստի ձոր» կոչվող հանգստյան գոտի կրակոցներ են հնչել, ինչի հետեւանքով Աշտարակի քաղաքապետի տեղակալին՝ վիրավորում ստացած, տարել էին հիվանդանոց:

Ավելի ուշ shamshyan.com-ը գրեց, որ իրավապահները տեղի ունեցած միջադեպի գործով ձերբակալել են Ուշան համայնքի ղեկավար, 28-ամյա Գրիգոր Հարությունյանին, «Ես եւ նա» ՍՊԸ տնօրեն, Ազգային ժողովի նախկին պատգամավոր, Արագածոտնի նախկին մարզպետ Սարգիս Սահակյանի եղբորը՝ 54-ամյա Նաիրի Սահակյանին (որը տնային կալանքի տակ է), Ուշի համայնքի ղեկավար, 45-ամյա Մարտին Մարտիրոսյանին եւ այլոց: Հիմա այն մասին, թե կոնկրետ ինչ է կատարվել:

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ «Աշտարակի ձոր» ռեստորանային համալիրի սեփականատերը վերոնշյալ հատվածում՝ հողի վրա, աշխատանքներ է իրականացրել, եւ նշված հասցե է եկել Աշտարակի քաղաքապետ, ՔՊ թիմակից դարձած նախկին ՀՀԿ-ամերձ Թովմաս Շահվերդյանը ու սկսել վիճել նրանց հետ, այդ հողի մասով առարկություններ ներկայացրել, որից հետո հեռացել է: Ապա դեպքի վայր են հասել ոստիկանները, քանի որ օպերատիվ տվյալներ են ստացել, որ նշված հասցեում «մարտաֆիլմ» է լինելու: Այդպես էլ եղել է. դեպքի վայր է եկել մոտ 40-հոգանոց խումբ ու սկսել քարերով, բահերով դաժան ծեծի ենթարկել ռեստորանի տիրոջը: Անգամ ոստիկանների ներկայությունը չի սաստել խմբի անդամներին:

Այս իրավիճակը տեսնելով՝ ռեստորանի տիրոջ տղան հանել է ավտոմատը ու կրակել, որպեսզի սաստի ներկաներին, եւ կրակոցներից վիրավորվել են Աշտարակի քաղաքապետի տեղակալն ու եւս մեկ անձ: Իրավապահ համակարգում քննությունը շարունակվում է, եւ ենթադրություններ կան, որ միգուցե քաղաքապետ Թովմաս Շահվերդյանն է այս խմբին ուղարկել ռեստորանի տիրոջ դեմ: Դատական համակարգն էլ, ըստ էության, ուսումնասիրելով նախաքննական մարմնի միջնորդությունը, հասկացել է, որ ռեստորանի սեփականատիրոջ որդին 40-հոգանոց խմբի ճիրաններից հորը փրկելու համար է կրակել: Այսինքն՝իրական մեղավորներին այլ տեղ պետք է փնտրել:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐՆ ՈՒ «ԵՌԱԲԼՈՒՐ»-Ը

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնում իրականացվող քննությամբ պարզվել են 2023թ. սեպտեմբերի 21-ին «Եռաբլուր» պանթեոնի տարածքում ՀՀ ԱԺ պատգամավորի նկատմամբ առերեւույթ ֆիզիկական ներգործություն կատարելու եւ խուլիգանության դեպքի էական հանգամանքները:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ոստիկանությունից հաղորդում էր ստացվել այն մասին, որ 2023թ. սեպտեմբերի 21-ին «Եռաբլուր» զինվորական պանթեոնում քաղաքացիների եւ ԱԺ պատգամավորներ Հ. Ասլանյանի, Հ. Աղազարյանի միջեւ տեղի է ունեցել վիճաբանություն, որի ժամանակ վերջիններիս քաշքշել են, հայհոյել, նաեւ ձեռքերով եւ ոտքերով հարվածներ հասցրել ԱԺ պատգամավոր Հ. Աղազարյանին:

Դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 5-րդ կետերով եւ 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Նախաքննությամբ հիմնավորվել է, որ 2023թ. սեպտեմբերի 21-ին՝ ժամը 08:30-ի սահմաններում, Ա. Գ.-ն, Ա. Ա.-ի եւ քննությամբ ինքնությունները դեռեւս չպարզված մի խումբ այլ անձանց հետ՝ խմբի կազմում, գտնվելով «Եռաբլուր» զինվորական պանթեոնի մուտքի մոտ, կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը եւ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելով իրավական եւ համընդհանուր ճանաչում ստացած բարոյական նորմերի նկատմամբ, Հայաստանի անկախության պետական տոնի առթիվ «Եռաբլուր» զինվորական պանթեոն այցելած՝ ՀՀ Ազգային ժողովի «Իմ քայլը» խմբակցության պատգամավորներ Հ. Աղազարյանի եւ Հ. Ասլանյանի քաղաքական հայացքներով եւ կուսակցական պատկանելիությամբ պայմանավորված, սեռական բնույթի բազմաթիվ հայհոյանքներ են հնչեցրել եւ անպարկեշտ արտահայտություններ արել վերջիններիս հասցեին:

Այդ ընթացքում Ա. Գ.-ն ոտքով մեկ անգամ դիտավորությամբ հարվածել է Հ. Աղազարյանի ազդրի հատվածին, իսկ Ա.Ա.-ն հրել եւ սեռական բնույթի բազմաթիվ հայհոյանքներ է հնչեցրել պատգամավորների հասցեին: Այդ գործողություններով խոչընդոտվել եւ թույլ չի տրվել պատգամավորներին մուտք գործել «Եռաբլուր» զինվորական պանթեոն:

Շարունակվող խուլիգանական բնույթի գործողությունները դադարեցվել են միայն ոստիկանության աշխատակիցների միջամտության արդյունքում:

Վերոնշյալ հանցավոր արարքները կատարելու համար, ձեռք բերված փաստերի հիման վրա, նշված երկու անձանց վերջնական մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (խմբի կազմում խուլիգանություն կատարելը):

Ա.Գ.-ի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը:

Նշված երկու անձանց մեղսագրվող արարքների մասով նախաքննությունն ավարտվել է, եւ նրանց վերաբերյալ անջատված մասով վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատարան:

ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԷՄՄԱ ՊԱԼՅԱՆԸ ՄԻՋԱՄՏԵԼ Է ԿՌՎԻՆ

Հոկտեմբերի 24-ին՝ ժամը 16:12-ին, Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ Գյումրի քաղաքի Պարույր Սեւակի փողոցի թիվ 13 շենքի մոտակայքում այրվում է ավտոմեքենա:

«Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրների փոխանցմամբ՝ այդ դեպքը տեղի է ունեցել բազմաբնակարան շենքում, որտեղ ապրում է ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Էմմա Պալյանը:

Ինչպես մեր աղբյուրներն են պատմում, հարցը առաջացել է կենցաղային խնդրից. երկու հարեւաններ կենցաղային հարցով վիճել են, այնուհետեւ դեպքին միջամտել է նաեւ Էմմա Պալյանը:

ՔՊ-ական պատգամավորը փորձել է հանդարտեցնել իրավիճակը, բայց իրականում ավելի է թեժացել իրավիճակը:

Ինչպես ականատեսներն են պատմում, նա սկսել է բղավել, իշխանական հայտարարություններ անել, ասել է, թե սա նախկինների Հայաստանը չի, որ նման կռիվներ անեն:

Էմմա Պալյանի այս հայտարարություններն ավելի են բարկացրել հարեւաններին, ու իրավիճակը ավելի է թեժացել:

Վիճաբանությունն էլ հանգեցրել է նրան, որ հարեւաններից մեկը շենքի բակում մեքենա է այրել:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց կապ հաստատել Էմմա Պալյանի հետ. վերջինս հաստատեց, որ մեքենան իրենց բակում է այրվել, սակայն նշեց, որ իրենց մեքենան չի, եւ ինքը որեւէ կռվի չի միջամտել. «Դեպքը մեր բակում է տեղի ունեցել, ես բազմաբնակարան շենքում եմ ապրում, բայց մեքենան մեր ընտանիքինը չէ, մեր հարեւանի հետ է դեպքը տեղի ունեցել: Ինչ վերաբերում է կռվին, ես այդ օրերին Երեւանում եմ եղել, կռվի մասին տեղեկություն չունեմ, որեւէ միջադեպի չեմ խառնվել, տեղյակ չեմ՝ ինչի մասին է խոսքը, ձեզանից եմ լսում»,-ասաց նա:

Հիշեցնենք, որ Էմմա Պալյանը վերջերս աչքի ընկավ իր մեկ այլ սկանդալային հայտարարությամբ, երբ ասաց, որ իր ամուսնուն գրանցել է որպես իր՝ հասարակական հիմունքներով օգնական, որպեսզի դրսում իրեն չսպասի եւ չմրսի:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՄԱՆԴԱՏ ՍՏԱՑԱՎ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ՝ Լեւոն Քոչարյանն ԱԺ «Հայաստան» խմբակցությունից մանդատ ստացավ:

«ԿԸՀ-ն արձանագրում է՝ ԱԺ «Հայաստան» դաշինքի մանդատը տրվում է հերթական հաջորդ թեկնածու Լեւոն Ռոբերտի Քոչարյանին», - ասաց ԿԸՀ նախագահ Վահագն Հովակիմյանը:

Նշենք, որ Լեւոն Քոչարյանը ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի կրտսեր որդին է, որը պահվում է անազատության մեջ:

Հիշեցնենք, որ Լեւոն Քոչարյանի փաստաբանական թիմի հայտարարության համաձայն՝ 2023 թվականի նոյեմբերի 6-ին պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելու պահից նա չի կարող պահվել անազատության մեջ:

ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹ՝ ԸՆԴԴԵՄ ՋՐԾԱՂԿԻ

Հայաստանում նախատեսվում է ջրծաղիկի պատվաստանյութի կիրառություն:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ այս մասին ասաց Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը ԱԺ մշտական հանձնաժողովների համատեղ նիստում 2024թ. պետական բյուջեի նախագծի նախնական քննարկումներում:

Նախարարը ներկայացրեց, որ 2024թ.-ին Իմունականխարգելման ազգային ծրագրի համար հատկացումներն ավելանալու են 16.4 տոկոսով՝ 728 մլն դրամի շրջանակներում:

«Դրա շնորհիվ մեր երկրում կարողանալու ենք ներդնել ջրծաղիկի պատվաստանյութի կիրառումը: Կարծում եմ՝ սա կնպաստի մեզ մոտ երեխաների, նաեւ զորակոչիկների առողջության պահպանմանն ու աշխատունակության պահպանմանը, նաեւ որոշակի առումով անվտանգային կարեւոր լուծում է»,- ասաց Ավանեսյանը:

Նախարարը նկատեց, որ ջրծաղիկը բարձր վարակելիություն ունի, եւ եթե, օրինակ, մանկապարտեզում մեկ խմբում ջրծաղիկի դեպք է գրանցվում, ապա այդ հաստատությունում գրեթե բոլորը վարակվում են, լինում են նաեւ ծանր դեպքեր:

ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՑԱՆՑ

2024թ. ՀՀ-ում կսկսի ձեւավորվել Շտապօգնության ծառայության միասնական ցանցը: Այս մասին Ազգային ժողովում խորհրդարանական մշտական հանձնաժողովների համատեղ նիստում 2024թ. պետբյուջեի նախագծի քննարկման ժամանակ՝նոյեմբերի 6-ին, ասել է հանրապետության առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը:

Այսպես, 2024թ. կսկսվի նրա կապիտալ վերազինումը:

«Առաջին նախագիծն արդեն իրականացվում է Գյումրիում: Այնտեղ շտապ բուժօգնության ցուցաբերման տեղի ծառայությունը արդեն հանձնվել է Առողջապահության նախարարության վարույթին»,- ասել է Ավանեսյանը ԱԺ-ում 2024թ. պետբյուջեի նախագծի քննարկման ժամանակ:

Նրա խոսքով՝ առաջիկայում կձեւավորվի միասնական դիսպետչերական ծառայություն, որը թույլ կտա ավելի արդյունավետ սպասարկել կանչերը Շիրակի ամբողջ մարզում:

Ներկա պահին երկրում գոյություն ունեցող շտապօգնության ծառայությունները գործում են տեղական իշխանության ՓԲԸ-ների իրավունքներով, այսինքն՝ դրանք, ըստ էության, գտնվում են տեղի իշխանությունների վարույթում:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԸ ՄԱՀԱՑԵԼ Է

ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Մաթեւոս Ասատրյանը հանկարծամահ է եղել:

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը տելեգրամյան էջում հայտնել է. «Ցավակցում եմ մեր ընկեր, ՔՊ պատգամավոր Մաթեւոս Ասատրյանի անժամանակ մահվան կապակցությամբ: Երիտասարդ, մաքուր ու արժանապատիվ ընկեր, հանգչի՛ր խաղաղությամբ»:

Նշենք, որ Մաթեւոս Ասատրյանն ամուսնացած էր, ուներ 3 երեխա:

ArmLur.am-ի եւ «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրակազմը ցավակցում է պատգամավորի ընտանիքի անդամներին եւ հարազատներին անժամանակ մահվան կապակցությամբ:

ՉԱՐԱԾԱՀԵՑ

ՊԱՏՃԱՌՎԵԼ Է 700 ՄԼՆ ԴՐԱՄԻ ՎՆԱՍ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկություններով՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում իրականացված քրեական վարույթով կատարված նախաքննությամբ հիմնավորվել է, որ Ե. Զ.-ն, 2003 թվականի հուլիսի 1-ից մինչեւ 2009 թվականի մարտի 4-ը զբաղեցնելով Երեւանի քաղաքապետի պաշտոնը, չարաշահել է իր պաշտոնեական լիազորությունները. առանց համապատասխան իրավական հիմքերի որոշում է կայացրել «Ավանգարդ Մոթորս» ՍՊԸ-ին կադաստրային արժեքից բազմակի անգամ ցածր գնով օտարել «Երիտասարդական պալատ» պետական փակ բաժնեհիրական ընկերությանը պատկանող, պետական սեփականություն հանդիսացող, Երեւան քաղաքի Սարալանջ փողոցի 1-ին հասցեում գտնվող 31.780 քմ մակերեսով հողամասը, որի հետեւանքով Երեւան համայնքին պատճառվել է առանձնապես խոշոր չափերով՝ 742.649.595 ՀՀ դրամի գույքային վնաս:



Մասնավորապես՝ 2004 թվականի հունվարի 13-ին «Երիտասարդական պալատ» պետական ՓԲԸ-ին պատկանող, Սարալանջ 1 հասցեում գտնվող 24345.2 քմ ընդհանուր մակերեսով անշարժ գույքը հիշյալ ընկերության սնանկության կառավարչի կողմից 506.000.000 ՀՀ դրամով վաճառվել է «Ավանգարդ Մոթորս» ՍՊ ընկերությանը: Նշված անշարժ գույքի զբաղեցրած 31,780 քմ մակերեսով հողամասը եղել է պետական սեփականություն եւ պայմանագրով չի հանդիսացել առուվաճառքի առարկա: Միաժամանակ նույն պայմանագրով սահմանվել է, որ անշարժ գույքի սեփականության իրավունքը կհամարվի փոխանցված գնորդին պայմանագիրը անշարժ գույքի կադաստրում պետական գրանցման պահից:

Սակայն այդ ընթացքում դեռեւս պայմանագիրը պետական գրանցում ստացած չլինելու, այսինքն՝ անշարժ գույքի սեփականության իրավունքը գնորդին փոխանցված չլինելու պայմաններում Ե. Զ.-ն, Սարալանջ փողոցի 1 հասցեում գտնվող 31.780 քմ մակերեսով հողամասը «Ավանգարդ Մոթորս» ՍՊ ընկերությանը վաճառելու անձնական շահագրգռվածությունից ելնելով, առանց համապատասխան իրավական հիմքերի, 2004 թվականի հունվարի 16-ին որոշում է կայացրել, որով վերը նշված ՍՊԸ-ին վերապահել է նշված հողամասի գնման նախապատվության իրավունք՝ վաճառքի գինը սահմանելով տվյալ ժամանակահատվածում գործող կադաստրային արժեքի չափով: Այնինչ, պայմանագիրը պետական գրանցում ստացել է միայն նույն թվականի հունվարի 27-ին, երբ ուժի մեջ մտած է եղել ՀՀ կառավարության համապատասխան որոշումը, ըստ որի՝ տվյալ հողամասի կադաստրային արժեքն այդ ժամանակահատվածում արդեն եղել է շատ ավելի բարձր՝ 805.623.000 ՀՀ դրամ:

Երեւանի քաղաքապետի որոշման հիման վրա՝ 2004 թվականի հունվարի 17-ին Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Կ. Դ.-ի եւ «Ավանգարդ Մոթորս» ՍՊ ընկերության տնօրեն Լ. Ա.-ի միջեւ կնքվել է հողամասի ուղղակի վաճառքի մասին պայմանագիր, որով Սարալանջ փողոցի 1-ին հասցեում գտնվող 31.780 քմ մակերեսով հողամասը 62.973.405 ՀՀ դրամով օտարվել է հիշյալ ընկերությանը:

Այսպիսով, Երեւանի նախկին քաղաքապետ Ե. Զ.-ի՝ վերը նկարագրված դիտավորյալ գործողությունների արդյունքում էական վնաս է պատճառվել հասարակության եւ պետության օրինական շահերին, այն է՝ հեղինակազրկվել է տեղական ինքնակառավարման մարմինը, խախտվել է պետական սեփականության հողերը տնօրինելու եւ օգտագործելու օրենսդրությամբ սահմանված կարգը, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ. Երեւանի քաղաքապետարանի հաշվեկշռում ընդգրկված, պետական սեփականություն հանդիսացող, 805.623.000 ՀՀ դրամ կադաստրային արժեքով 31.780 քմ մակերեսով հողամասը «Ավանգարդ Մոթորս» ՍՊ ընկերությանն օտարվել է 62.973.405 ՀՀ դրամով, որի հետեւանքով Երեւան համայնքին պատճառվել է առանձնապես խոշոր չափերով՝ 742.649.595 ՀՀ դրամի գույքային վնաս:

Վերը նշված հանցավոր արարքների համար Ե. Զ.-ին մեղադրանք է ներկայացվել՝ նախկին ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով, իսկ Կ. Դ.-ին՝ 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով:

Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է: Վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, հանձնվել են հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ դատարան ուղարկելու միջնորդությամբ:

ՔՐԵԱԿԱՆ

ՈՒՂԵԿՑՎԵԼ Է ԿՐԱԿՈՑՆԵՐՈՎ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ ուշագրավ դեպք է տեղի ունեցել Տավուշի մարզի Իջեւան տարածաշրջանի գյուղերից մեկում: Նոյեմբերի 4-ին՝ ժամը 12:30-ի սահմաններում, Այգեհովիտ գյուղի դաշտավայրում վիճաբանություն է տեղի ունեցել երկու կողմերի միջեւ:

Պատճառը, որքան էլ անհավանական թվա, կապված է այդ տարածքից հեռանալու հետ, որի ժամանակ կողմերից մեկը մյուս կողմի վրա կրակոց է արձակել: Հրացանից արձակած փամփուշտից տուժել է 1998 թվականին ծնված մի բնակիչ. վերջինս որովայնի հատվածում ստացել է վնասվածք:

Տուժողը ծանր վիճակում տեղափոխվել է Իջեւանի բժշկական կենտրոն, իսկ հետո՝ Երեւան:

ԱՆՁՆԱԿԱՆ ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուշագրավ դեպք է տեղի ունեցել Կոտայքի մարզի Կամարիս գյուղում: Հոկտեմբերի 5-ին՝ ժամը 23:30-ի սահմաններում՝ անձնական հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ, նշված գյուղի բնակիչ՝ 1999 թվականին ծնված տղամարդը, չկառավարելով իրեն, դանակով հարվածել եւ մարմնական վնասվածք է պատճառել 1999 թվականին ծնված տղամարդուն, որը նույնպես Կամարիս գյուղի բնակիչ է:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկություններով՝ համագյուղացիներն իրար հետ լավ խմել են, որից հետո վեճ է ծագել կողմերի միջեւ, սկսել են միմյանց հասցեին հայհոյանքներ հնչեցնել, այնուհետեւ կողմերից մեկը դանակահարել է մյուսին՝ պատճառելով որովայնի հատվածում վնասվածք:

Նախնական տվյալներով՝ տուժողը հիվանդանոց է տեղափոխվել որովայնի առաջին պատի կտրած, ծակած վերքով:

Իրավապահ մարմինների կողմից որոնվում է դանակահարություն կատարած անձը:

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄՏԵԼ ԵՆ ՆԱԽԿԻՆ ՊԵՏԻ ՏՈՒՆ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեն մտել է Ռազմական ավիացիոն համալսարանի նախկին պետ Դանիել Բալայանի տուն եւ սկսվել է խուզարկություն կատարել: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեում կա հարուցված քրեական գործ, որի շրջանակներում էլ նրա տուն են մտել ու խուզարկել:

Հիշեցնենք, որ 2021 թվականի դեկտեմբերի 29-ին նախագահ Արմեն Սարգսյանը հրամանագիր էր ստորագրել, որում ասվում է. «Հիմք ընդունելով վարչապետի առաջարկությունը, համաձայն Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաեւ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի՝

Դանիել Բալայանին ազատել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Մարշալ Արմենակ Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարանի պետի պաշտոնից»:

Եվ, ահա, նրա ազատումից մեկ տարի անց իրավապահները մտում են Ռազմական ավիացիոն համալսարանի նախկին պետի տուն:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՌԵՂԾՎԱԾ

ԲԱՆՏԻՑ ՏԵՂԱՓՈԽՎԵԼ ԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ առեղծվածային պայմաններում Հայաստանում հայտնված 1 տոննա Կոկաինի գործով քննությունը վերջնական փուլին է մոտեցել, ու ԱԱԾ-ն որոշում կկայացնի, ասել է թե՝նախաքննական մարմինը նախաքննության ավարտ կհայտարարի: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ գործի ավարտական փուլում կալանավորների նկատմամբ նոր խափանման միջոց է կիրառվել: Մասնավորապես, ԱԺ նախկին պատգամավոր Միհրան Պողոսյանի ընկերության տնօրեն Լ.Ա-ի, որը կին է, եւ պահեստապետ Ս.Գ-ի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել տնային կալանքը, ասել է թե՝նրանք կալանավայրից դուրս են եկել ու ներկայումս կրում են տնային կալանք:

Գրել էինք, որ ԱԱԾ-ի կողմից մի շարք եվրոպական երկրներ նամակներ են ուղարկվել, եւ կոնկրետ հարցադրումներ են արվել, սպասում են կոնկրետ պատասխանների, ու, ըստ էության, շատ պատասխաններ եվրոպական գործընկերներից արդեն ստացել են: Նշենք, որ այս գործով շարունակում են կալանքի տակ մնալ ԱԺ նախկին պատգամավոր Միհրան Պողոսյանին պատկանող ընկերության աշխատակիցները, որոնցից մեկը կին է:

Հիշեցնենք, որ ԱԱԾ-ն հայտնել էր «Մրգենի» ՍՊ ընկերության փաստացի սեփականատիրոջ, ԱԺ նախկին պատգամավոր Միհրան Պողոսյանի, նույն ընկերության տնօրեն Լ.Ա-ի եւ պահեստապետ Ս.Գ-ի նկատմամբ խմբի կազմում, նախնական համաձայնությամբ առանձնապես խոշոր չափերով թմրամիջոց, մասնավորապես՝ 1 տոննա Կոկաին ապօրինի իրացնելու եւ առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցի մաքսանենգություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին: Վերջիններիս նկատմամբ, որպես խափանման միջոց, ընտրվել է կալանքը, նախկին պատգամավորի նկատմամբ հայտարարվել է հետախուզում: Հավելենք, որ, իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տվյալներով, «Մրգենի» ՍՊԸ-ն հիմնադրվել է թավշյա հեղափոխությունից հետո՝ 2018 թվականի հուլիսի 27-ին:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝նոյեմբերի 3-ից 6-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 118 դեպք, որոնցից 5-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ԳՈՐԾՈՎ ՏՈՒԺՈՂԸ

Նոյեմբերի 4-ին՝ ժամը 12:30-ի սահմաններում, Իջեւան համայնքի սահմանամերձ Այգեհովիտ գյուղի հարակից «Երկար թալա» կոչվող հանդամասում Այգեհովտի 25-ամյա բնակիչ Ժորա Սիմոնյանը իրեն պատկանող «ԳԱԶ 66» մակնիշի ավտոմեքենայով համագյուղացի 20-ամյա Ռազմիկ Բլբուլյանի հետ վառելափայտ է հավաքել ու այդ ժամանակ նրանց է մոտեցել համագյուղացի 62-ամյա Մարտուն Եսայանը, որը պահանջել է, որպեսզի նրանք հանդամասից հեռանան: Այդ ժամանակ Ժորա Սիմոնյանը հայհոյել է Եսայանին, ինչից հետո Մ. Եսայանը հեռացել է, մոտ 30 րոպե անց նա, հրացանով զինված, վերադարձել է եւ Ժորա Սիմոնյանին վրա կրակել: Ժամը 13:30-ի սահմաններում Ժորա Սիմոնյանը մեջքի շրջանում հրազենային վերքերով տեղափոխվել է Իջեւանի բժշկական կենտրոն, ուր նրա առողջական վիճակը գնահատվել է միջին ծանրության, նրան բուժօգնություն է ցուցաբերվել: Իջեւանի բաժնի ոստիկաններին հաջողվել է հայտնաբերել Մ. Եսայանին, որը նախկին անտառապահ է: Ժորա Սիմոնյանի հոր՝ Գարսիկ Սիմոնյանի ընտանիքը Այգեհովտում հայտնի է որպես անտառում վառելափայտի գործով զբաղվող: Ժորա Սիմոնյանը 6 տարի առաջ ոստիկանություն բողոք է ներկայացրել, որ 2017թ. հոկտեմբերի 4-ին ոստիկանության Իջեւանի բաժնում ինքը խոշտանգվել է այդ բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ Գերասիմ Մարդանյանի կողմից: Գերասիմ Մարդանյանը հերքում է այդ մեղադրանքը, այն համարում Սիմոնյանների կողմից սարքված այն պատճառով, որ ինքն ի պաշտոնե պայքարել է ապօրինի անտառահատումների դեմ: Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Ջոյա Ջաքինյանի կայացրած վճռով հերքվել է խոշտանգման փաստը: Գ. Մարդանյանը արդարացվել է, սակայն դատախազությունը եւ Ժ. Սիմոնյանի շահերի ներկայացուցիչը այդ դատավճռի դեմ Վերաքննիչ բողոք են ներկայացրել, Վերաքննիչ դատարանը բեկանել է Առաջին ատյանի դատարանի վճիռը: Ներկայումս այդ գործով Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում, դատավոր Սամվել Մարդանյանի նախագահությամբ, դատաքննություն է ընթանում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ԹԱՔՑՆՈՒՄ Է ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ալբերտ Այվազյանը Շիրակի մարզի փոխմարզպետ է նշանակվել 2022 թվականի հունվարի 5-ին: Մինչ այս՝ 1996-ից մինչ 2021 թվականը, Այվազյանը զբաղեցրել է նույն մարզի Առափի համայնքի ղեկավարի պաշտոնը:

Կառավարման 25 երկար ու ձիգ տարիների ընթացքում Այվազյանը կարծես իրենով է արել Առափի համայնքի հողային ֆոնդը:

Բացատրենք՝ ինչու եկանք այս եզրակացությանը:

Այվազյանը սեփականաշնորհած 8 անշարժ գույք ունի, որից մեկը անհատական բնակելի տուն է նույն համայնքում, իսկ 7-ը՝ հողամասեր, որից 5-ը ձեռք են բերվել 2018 թվականից հետո:

Ուշագրավն այն է, որ, ըստ հայտարարագրի, հողամասերից մեկը Այվազյանը ձեռք է բերել 1350 թվականին:

Բացի այս, Այվազյանը իր շահագործման ներքո է վերցրել 20 հողամաս, որից 3-ը՝ Առափի համայնքում, 17-ը՝ Ախուրյան համայնքում: Այս հողամասերը պատկանում են այլ անձի, սակայն 90 օրից ավել շահագործվում են Այվազյանի կողմից:

Ախուրյանում գտնվող հողամասերին Այվազյանը, ըստ երեւույթին, տիրել է, քանի որ հանդիսանում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Ախուրյանի տարածքային խորհրդի նախագահ:

Այվազյանը տրանսպորտային միջոցներ չի հայտարարագրել, սակայն կինը՝ Արմենուհի Ոսկանյանը, հայտարարագրել է, որ 2014 թվականին ձեռք է բերել 2002 թվականի արտադրության, Lexus մակնիշի մեքենա: Նրա բանկային հաշիվների մնացորդները կազմել են 300 դոլար, կանխիկ դրամական միջոցները կազմել են 1 մլն 650 հազար դրամ: Այվազյանի հաշվետու տարվա եկամուտները 2022 թվականին կազմել են 54 մլն 376 հազար դրամ, որի 8 մլն 754 հազարը աշխատանքի վարձատրություն է «ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկից, 681 հազար դրամը կեսաթոշակ է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից:

Այվազյանի եկամուտներից 30 մլն դրամը վարկ է, որից 26 մլն դրամը բնակարանի հիփոթեքի մայր գումարի մնացորդն է, որը տարեվերջին կազմել է 22 մլն 675 հազար դրամ:

Վարկերի մարմանը Այվազյանն ուղղել է 12 մլն 915 հազար դրամ, իսկ գյուղատնտեսական աշխատանքների համար փոխմարզպետը ծախսել է 12 մլն 500 հազար դրամ:

Եկամտի որոշ մասի՝ 14 մլն 950 հազար դրամի ստացման աղբյուրը թաքցված է եւ նշված «այլ եկամուտ»:

Հիշեցնենք, որ Ալբերտ Այվազյանին համայնքապետի ընտրություններում չընտրելուց հետո որոշեցին չնեղացնել եւ կարգեցին փոխմարզպետ: Նրա փոխարեն Ախուրյան խոշորացված համայնքի ղեկավար ընտրվել էր դաշնակցական Արթուր Իգիթյանը:

Մամուլում տեղեկություններ տարածվեցին, որ Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանի միջնորդությամբ է վարչապետը Այվազյանին փոխմարզպետ նշանակել, քանի որ Ամասիայում եւ Ախուրյանում ՔՊ-ի պարտությունից հետո իշխանական թեւում դժգոհություն էր հասունացել մարզի ՔՊ կառույցի նկատմամբ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱ

ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԸ՝ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԻՄԱՑ

Երեկ՝ նոյեմբերի 6-ին, արցախցիները բողոքի ակցիա են իրականացրել Աբխազիայի եւ սոցիալական հարցերի նախարարության շենքի դիմաց: Այստեղ մասնավորապես հավաքվել էին 44-օրյա պատերազմի հետեւանքով Հադրութից, Շուշիից եւ Արցախի այլ օկուպացված բնակավայրերից բռնի տեղահանված եւ Հայաստան տեղափոխված արցախցի թոշակառուները:

Այս կապակցությամբ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից մանրամասներ են հայտնել. «Հոկտեմբերի 26-ին կայացած նիստում Կառավարությունն ընդունել է ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց ժամանակավոր պաշտպանության տակ վերցնելու մասին որոշում:

Ըստ այդմ՝ օրենքի ուժով նրանք ունեն կենսաթոշակի եւ նպաստի իրավունք, եթե բավարարում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Այսինքն՝ անկախ ԼՂ-ում կենսաթոշակ կամ նպաստ ստացած լինելու հանգամանքից՝ ԼՂ-ից բռնի տեղահանված անձինք ՀՀ-ում կենսաթոշակի կամ նպաստի իրավունք ձեռք կբերեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Մեր հայրենակիցների՝ կենսաթոշակի կամ նպաստի իրավունքը ՀՀ-ում իրացնելու համար անհրաժեշտություն է առաջացել կատարել օրենսդրական փոփոխություններ, որոնցով կհստակեցվեն կենսաթոշակի կամ նպաստի իրավունքի իրացման (օրինակ՝կենսաթոշակ նշանակելու համար դիմելու, ստաժի հաշվարկման եւ այլն) ընթացակարգերը: Անհրաժեշտ է փոփոխություններ կատարել նաեւ համապատասխան տեղեկատական բազաները ձեւավորելը եւ վարելն ապահովող ծրագրային համակարգերում:

Մասնավորապես՝ առաջիկայում կստեղծվի հարթակ, որը ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց հնարավորություն կտա առցանց դիմել կենսաթոշակ (եթե ԼՂ-ում ստացել են կենսաթոշակ), երեխայի ծննդյան միանվագ նպաստ, մայրության նպաստ, խնամքի նպաստ նշանակելու համար:

Եթե անձը ԼՂ-ում չի ստացել կենսաթոշակ, ապա ՀՀ-ում կենսաթոշակ նշանակելու համար նա պետք է անձամբ դիմի Միասնական սոցիալական ծառայության ցանկացած տարածքային բաժին:

Կենսաթոշակ կամ նպաստ նշանակելու համար դիմելու քայլերը կներկայացվեն առաջիկայում:

Տեղեկացնում ենք, որ ԼՂ մեր հայրենակիցներին կենսաթոշակ նշանակելու դեպքում նրանց կենսաթոշակի իրավունք տվող տարիքը մինչեւ հոկտեմբերի 28-ը լրացած լինելու դեպքում կենսաթոշակ կվճարվի՝ հոկտեմբերի 28-ից սկսած: Կարեւոր դիտարկում. կենսաթոշակ կամ նպաստ նշանակելու համար օրենսդրությամբ ամրագրված պարտադիր պայման է ՀՀ բնակության վայրի հասցեով հաշվառված լինելը: Սա նշանակում է, որ ԼՂ-ից բռնի տեղահանված անձինք մինչեւ կենսաթոշակ կամ նպաստ նշանակելու համար դիմելը պետք է հաշվառվեն այն վայրի հասցեով, որտեղ տվյալ պահին բնակվում են, հակառակ դեպքում նրանց դիմումները կմերժվեն»:

● *Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 44 ՃՏՊ. 4 մարդ զոհվել է, 63-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարություն աճուրդի մասին

«Մուռմել-Արմանի» ՍՊԸ-ին պատկանող՝ ստորեվ նշված շարժական գույքերը հրապարակային սակարկություններով (աճուրդ) վաճառելու մասին

«Մուռմել-Արմանի» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի կողմից 28.11.2023 թվականին ժամը 15:00-ին ք. Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի թիվ ՍՆԴ/0719/04/20 սնանկության գործով 04.09.2020 թվականին կայացված վճռով սնանկ ճանաչված «Մուռմել-Արմանի» ՍՊԸ ստորեւ նշված շարժական գույքերի հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտերով.

Լոտ 3 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «LECITRAILER» մակնիշի, D 2440 տիպարի, 2000թ. արտադրության, 228 L 01 պետհամարանիշով, գույնը՝ սպիտակ, թափքի տեսակը՝ սառնարան, ՏՄ տեսակը՝ կիսակցորդը (նույնացման համար՝VV1F3FA1XSN097823, գտնվելու վայրը՝Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝4,729,225 ՀՀ դրամ:

Լոտ 4 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «MAN» մակնիշի, TGA-18.430 տիպարի, 2006թ. արտադրության, 090 PP 96 պետհամարանիշով, գույնը՝ դեղին, թափքի տեսակը՝ թամբային քարշակ, ՏՄ տեսակը՝ բեռնատար ավտոմեքենան (նույնացման համար՝WMAH13ZZ97M464106, գտնվելու վայրը՝Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝4,782,969 ՀՀ դրամ:

Լոտ 5 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «MAN» մակնիշի, TGA-18-430 տիպարի, 2005թ. արտադրության, 756 US 65 պետհամարանիշով, գույնը՝կարմիր, թափքի տեսակը՝թամբային քարշակ, ՏՄ տեսակը՝ բեռնատար ավտոմեքենան (նույնացման համար՝WMAH06ZZ85M423273, գտնվելու վայրը՝Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝4,517,248 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը,

բ/ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/ աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված բոլոր գույքերի վրա առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 10,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները: Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման «Մուռմել-Արմանի» ՍՊԸ սնանկության գործով թիվ 2480103421570000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչեւ աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել եւ/կամ հետաձգվել՝ այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս քան երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով:

Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետեւաբար աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը:

Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում սնանկության հատուկ հաշվին լոտի գնման գինը՝ հաշվանցելով նախօրոք վճարած նախավճարը:

Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու եւ պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից:

Աճուրդի անցկացման, լոտի ծանոթացման եւ ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին (էլ. Փոստ՝ makar@bankruptcy.am)՝ աշխատանքային օրերին 11:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում:

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

ՆՈՐ ՎԱԳՈՆՆԵՐ ԿՀԱՅՏՆՎԵՆ

«Կարեն Դեմիրճյանի անվան Երեւանի մետրոպոլիտեն» ՓԲԸ տնօրենի պատասխանատու Բաբկեն Սեդրակյանը Երեւանի քաղաքապետարանի գործակարգավարական խորհրդակցության ժամանակ հայտնեց, որ Կառավարության կողմից ֆինանսավորման հաստատումն արդեն կա, սակայն իրենք լրացուցիչ ֆինանսավորման կարիք դեռեւս ունեն:

Այս դիտարկմանն ի պատասխան՝ Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հետաքրքրվեց, թե կան արդյոք կանգնած վագոններ, որոնք գիծ դուրս բերելու դեպքում Մետրոպոլիտենի աշխատանքի ծանրաբեռնվածությունը կնվազի. Սեդրակյանը դրական պատասխան տվեց:

«Ունենք կանգնած վագոններ, սպասում ենք, որ անվազույգերը գան: Կան վագոններ, որ գիծ պետք է դուրս գան: Ֆինանսավորումը հաստատվեց, բայց մենք էլի հրատապ ծախսեր ունենք: 620 մլն-ով 32 անվազույգ եւ 4 կմ ռելս ենք ձեռք բերում»,- ասաց նա՝հավելելով, որ կանգնած է մոտ 10 վագոն, ֆինանսավորման շնորհիվ՝ առաջիկայում կսկսի աշխատել 3-ը:

Ավինյանը եւս մեկ անգամ ճշտեց, թե դա նշանակում է արդյոք՝ կան վագոններ, որոնք հնարավոր է վերականգնել ու դնել գծի վրա. Սեդրակյանը պատասխանեց. «3 ամսվա մեջ եթե մատակարարումը լինի, շատ արագ կանենք: Մեզ պետք է լինելու 15-20 օր, որ վերականգնենք»:

Սեդրակյանը հավելեց նաեւ այլ հարցերի առկայության մասին: Նրա խոսքով՝մրցույթներ կան, որոնցում կան հաղթողներ, պահեստամասեր են պետք վագոնների, քանի որ միայն անվազույգերով հարցն ամբողջապես չի լուծվի: Դրանց զուգահեռ մոտ 200 մլն դրամի պահեստամասեր պետք է մատակարարվեն, մրցույթը կայացել է հունիս ամսին:

«Էլի Կառավարություն ներկայացրել ենք՝300 քանի միլիոն է պետք, եւ ունենք շարժասանդուղքների հետ կապված էլ 520-530 մլն դրամի կարիք»,- ասաց նա:

Հիշեցնենք՝ Երեւանի քաղաքապետարանի՝ հոկտեմբերի 10-ի գործակարգավարական խորհրդակցության ժամանակ քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնել էր, որ Մետրոպոլիտենում ավելի վաղ միջադեպ է եղել, որի հետեւանքով, բարեբախտաբար, տուժածներ չեն եղել, բայց ներկայում շատ վտանգավոր իրավիճակ է ստեղծված:

«Բյուրոկրատական անիմաստ ձգձգումները անիմաստ ռիսկեր են առաջացնում: Եթե հրատապության մասին է խոսքը, այս ծրագիրը ամենահրատապներից մեկն է ՀՀ-ում»,- ասել էր Ավինյանը:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից, ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.2003թ. N217-Ն եւ 03.08.2023թ. N1332-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է «Մասիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի՝ Արարատի մարզի Մասիս համայնքի Մասիս քաղաքի վարչական տարածքում գյուղատնտեսական /ոռոգում/ նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսից 4.0 լ/վ ջրառ իրականացնելու ջրօգտագործման թույլտվության ստացման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, որոնք կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին՝ ժամը 17:00-ից - 18:00-ն դիմել Ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացված փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթի քննարկումը տեղի կունենա 2023 թվականի նոյեմբերի 13-ին՝ ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

Շրջակա միջավայրի նախարարություն

ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Աճուրդի առաջին փուլը կայանալու է 23 նոյեմբերի 2023 թվականին, ժամը 12:00-ին, ՀՀ, քաղաք Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում, այնուհետեւ, կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝01.07.2024թ.-ին:

Աճուրդի կազմակերպիչն է «Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ), որն իրականացնելու է հետեւյալ լոտի (այսուհետ՝ Լոտ) բաց աճուրդ «հոլանդական» եղանակով:

Աճուրդի պայմաններն են.

- Լոտ՝ ՀՀ, Վայոց ձորի մարզ, համայնք Վայք., Վայք ք., Շահումյան փողոց, 97 շենք, 33 հասցեում գտնվող 76 քմ բնակարան,
- Լոտի մեկնարկային գինը՝ 13000000 (տասներեք միլիոն) ՀՀ դրամ,
- Միջնորդավճար՝ Լոտի ձեռքբերման գնի 1 տոկոսի չափով (այսուհետ՝ Միջնորդավճար),

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.

- ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ մասնակցի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը,
- իրավաբանական անձի դեպքում՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի եւ կամ ներկայացուցչի անձը հաստատող փաստաթուղթը եւ լիազորությունները հաստատող փաստաթուղթը, մասնակցի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով աճուրդավարի մուրճիկի 3 (երեք) հարվածից առաջ առաջարկել է ամենաբարձր գինը: Աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը Լոտի գինը եւ Միջնորդավճարը վճարում է աճուրդի կայացման օրվան հաջորդող 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվանցելով մուծված նախավճարի գումարը: Սահմանված ժամկետում գնորդի կողմից վճարումներ չկատարելու դեպքում Կազմակերպիչը կարող է աճուրդի արդյունքները համարել չեղյալ: Կարող են սահմանվել Լոտի գնի վճարման այլ ժամկետներ եւ չափաբաժիններ՝ վաճառողի եւ գնորդի կողմից համապատասխան փոխհամաձայնությամբ:

Աճուրդի մասնակցության նախավճարը կազմում է Լոտի ընթացիկ մեկնարկային գնի 1 (մեկ) տոկոսը, որի վճարման վերջնաժամկետը յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն է: Նախավճարը վճարվում է անկանխիկ՝ հետեւյալ հաշվեհամարին՝ 2470103374150000, կամ Կազմակերպչի կողմից տրամադրված այլ հաշվեհամարին, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում այն կարող է նաեւ վճարվել կանխիկ եղանակով աճուրդի կայացման հասցեում՝ Կազմակերպչի դրամարկղ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում:

Լոտին կարող եք ծանոթանալ սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 10:00-ից մինչեւ 18:00-ն՝ զանգահարելով ստորեւ նշված հեռախոսահամարին եւ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու եւ վերջինիս պատճենն անվճար ստանալու համար դիմել Կազմակերպչին՝ ստորեւ նշված հասցե:

Կազմակերպիչը կարող է կատարել սույն ծանուցման փոփոխություններ եւ լրացումներ, որոնք կարող են իրականացվել այնպես, ինչպես կատարվել է աճուրդի մասին հրապարակային ծանուցումը: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել ստորեւ նշված հեռախոսահամարին կամ այցելել ստորեւ նշված կայքերը:

էլ. փոստ՝ llcbst@yahoo.com

հասցե՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31

հեռ.՝ +374 11 56 45 13

կայք՝ www.llcbst.am, www.borsa.am

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԲԱՑՎԵՑ

ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՇԱԲԱԹ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Հայաստանի դպրոցներում, բուհերում, գրադարաններում, տարբեր կրթական հաստատություններում կանցկացվեն մեդիագրագիտության դասեր, խաղեր, հանդիպում-քննարկումներ փորձագետների եւ լրագրողների հետ, համալսարաններում՝ թեմատիկ բանավեճեր եւ դասախոսություններ. մեկնարկել է նոյեմբերի 6-12-ը «Մեդիագրագիտությունը թվային միջավայրում. դատերազմին զուգահեռ» խորագիրը կրող մեդիագրագիտության շաբաթը:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ մեդիագրագիտության հայաստանյան շաբաթը ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախաձեռնած «Մեդիա եւ ինֆորմացիոն գրագիտությունը թվային միջավայրում» գլոբալ շաբաթվա շարունակությունն է:

Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի տնօրեն Նունե Սարգսյանի խոսքով՝ 21-րդ դարում գրագետ մեդիա սպառող ու մեդիա ստեղծող լինելն անհրաժեշտություն է, եւ դպրոցը լավագույն հարթակն է այս հմտությունները տարածելու, քննադատական մտածողությամբ քաղաքացիներ կրթելու համար:

«Մեդիագրագիտության շաբաթը դարձել է ամենամյա գեղեցիկ ավանդույթ: Մենք այս մեկ շաբաթվա ընթացքում ոչ թե ոլորտի խնդիրներն ենք փորձում լուծել, այլ, կարեւորելով մեդիագրագիտությունը, տարբեր միջոցառումներով փորձում ենք տարվա բոլոր շաբաթների ընթացքում այն մեր առօրյայի մաս դարձնել: Այսպիսով նաեւ նպատակ ունենք, դպրոցական տարիքից սկսած, ձեւավորել քննադատական, վերլուծական մտածողություն»,- ասաց նա:

Հայաստանում Գերմանիայի դեսպան Վիկտոր Ռիխտերը նշեց՝ երիտասարդների ակտիվ ներգրավումն այս գործընթացներում առաջնային է:

«ՋԼՄ-ների պրոֆեսիոնալիզմը՝ որպես ամբողջություն, շարունակական գործընթաց է, եւ մենք էլ ներգրավված ենք այդ գործընթացում: Մեդիագրագիտությունը անմիջական մաս է կազմում ՋԼՄ-ների ազատության: Մեդիագրագիտությունն ուղղված է նաեւ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմանը, հատկապես՝ թվային ոլորտում, եւ այս ամենը միավորելը հենց այն է, ինչ մենք անելու ենք՝ միասին համագործակցելով: Մենք արդեն գիտենք, որ Հայաստանը իսկապես առաջնային տեղ ունի այս ոլորտում»,- նշեց դեսպանը: Նշենք, որ Մեդիագրագիտության հայաստանյան շաբաթն այս տարի անցկացվում է «Երիտասարդները գործելիս, Հայաստանում երիտասարդների զորեղացման եւ առաջնորդության խթանման» եւ «Հայաստանի մեդիայի զարգացման» ծրագրերի շրջանակում: Վերջինն իրականացվում է՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ:

«Արտակարգ իրավիճակները՝ համավարակը, տարածաշրջանային հակամարտությունը մեդիագրագիտությունն էլ ավելի կարեւոր են դարձնում եւ պահանջում, որ մեդիա եւ տեղեկատվություն սպառողները կարողանան ճիշտ կողմնորոշվել եւ տարբերակել ճիշտ ու սխալ տեղեկատվությունները»,- նշեց ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան առաքելության տնօրեն Ջոն Ալլելոն:

ՈՐՈՇՈՒՄ

ԲԱԼԵՏԱՅԻՆ ՀԱՏԱԿ ՉԵՌՔ ԿԲԵՐՎԻ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ՀՀ կառավարության որոշմամբ՝ ԿԳՄՍ նախարարությանը 2023 թվականի պետական բյուջեով հատկացված միջոցների միջեւ կատարվել է վերաբաշխում 68 մլն 242 հազար դրամ գումարի շրջանակում: Գումարն ուղղվել է «Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ին անհրաժեշտ բալետային հատակի ձեռքբերմանը:

ԿԳՄՍՆ-ից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ համաձայն հիմնավորման՝թատրոնի բալետային թատերախմբի բնականոն գործունեության ապահովման համար կարեւոր է որակյալ բալետային հատակի ապահովումը փորձասենյակներում եւ բեմում, ինչը պայմաններ կստեղծի ստեղծագործական անձնակազմի աշխատանքի բարելավման համար: Բեմահարթակի եւ բալետային փորձասենյակների հատակի ծածկույթը չի համապատասխանում բալետային ներկայացումների, փորձերի անցկացման եւ ցուցադրությունների համար սահմանված միջազգային ստանդարտներին, ինչը խոչընդոտում է բալետային թատերախմբի աշխատանքների պատշաճ կազմակերպմանը: Բացի այդ, կարեւորելով միջազգային հյուրախաղերը եւ նկատի ունենալով, որ համայնքային թատրոնների բեմահարթակները հարմարեցված չեն բալետային ներկայացումների ցուցադրությանը՝ ձեռք բերված պրոֆեսիոնալ հատակածածկը լայն հնարավորություն կընձեռի նաեւ մարզային շրջագայությունների համար:

Այսպիսով, բալետային թատերախմբի աշխատանքներն արդյունավետ եւ որակով կազմակերպելու, արտիստների արտադրական վնասվածքները կանխելու, հանդիսատեսին պատշաճ ներկայանալու նպատակով փորձասենյակների եւ բեմի համար անհրաժեշտ է ձեռք բերել միջազգային ստանդարտներին համապատասխան բալետային հատակ: Բալետային հատակի տեղադրման գործընթացը չի խաթարի թատրոնի բնականոն աշխատանքը, խաղացանկային ներկայացումները կշարունակվեն բնականոն ընթացքով, քանի որ տեղադրման գործընթացը չի ենթադրում հատակածածկույթի ապամոնտաժում, այլ վերջինս ամրացվում է առկա հատակին:

ՍՊՈՐՏ

ՀԵՂԻՆԱԿԸ ՄԽԻԹԱՐՅԱՆՆ Է

Իտալիայի ֆուտբոլի առաջնության 11-րդ տուրում «Ինտեր»-ը հյուրընկալվել էր «Ատալանտա»-ին:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ «Ինտեր»-ին հաջողվեց առաջ անցնել հաշվի մեջ առաջին կեսի վերջին րոպեներին: 40-րդ րոպեին նշանակված 11-մետրանոց հարվածն անվրեպ իրացրեց Չախանօղլուն: Միլանյան ակումբին հաջողվեց երկրորդ գնդակը խփել 57-րդ րոպեին: Ստանալով Մխիթարյանի փոխանցումը՝ հեռահար, դիպուկ հարվածով աչքի ընկավ աշխարհի գործող չեմպիոն Լաուտարո Մարտինեսը, բայց րոպեներ անց «Ատալանտա»-ն կրճատեց հաշվի տարբերությունը:

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի նախկին ավագ Հենրիխ Մխիթարյանը «Ինտեր»-ի մեկնարկային կազմում էր, սակայն փոխարինվեց 70-րդ րոպեին:

«Ատալանտա»- «Ինտեր»՝ 1:2:

Այս տուրից հետո «Ինտեր»-ը դեռեւս Սերիա Ա-ի մրցաշարային աղյուսակում առաջատար է 28 միավորով:

ՄՏԱԴԻՐ Է ԳԵՐԱԶԱՆՑԵԼ

Աշխարհի առաջին ռակետ, 36-ամյա սերբ Նովակ Ջոկովիչը Փարիզի «Մասթերսի» տիտղոսը նվաճելուց հետո հայտարարել է, որ մտադիր է գերազանցել ամերիկացի Ջիմի Քոնորսի ռեկորդը տիտղոսների քանակով:

Ջոկովիչը նվաճեց 97-րդ տիտղոսը: Քոնորսը հաղթել է 109 մրցաշարում: Երկրորդ տեղում է շվեյցարացի Ռոջեր Ֆեդերերը՝ 103 տիտղոս:

«Ես կփորձեմ գերազանցել այդ ռեկորդը: 12 հաղթանակ քիչ ունեմ, բայց առջեւում դեռ մի քանի տարի ունեմ: Ես մտադիր եմ գերազանցել բոլոր հնարավոր ռեկորդները: Երբեք համեստ չեմ եղել այդ հարցում, այդ պատճառով էլ մարդիկ ինձ չեն հավանում»,- Ջոկովիչի խոսքը մեջբերում է ESPN-ը:

Ջոկովիչը 24 տիտղոսով ռեկորդակիր է «Մեծ սաղավարտի» մրցաշարերում: Նա 40 տիտղոս է նվաճել «Մասթերս» շարքում:

ՕՐԱՎԱՐՁՈՎ Է ԲՆԱԿՎՈՒՄ

Գերմանիայի չեմպիոն Մյունխենի «Բավարիայի» անգլիացի հարձակվող Հարի Քեյնը Մյունխենում շարունակում է ընտանիքի հետ բնակվել հյուրանում՝ վճարելով օրական 10 հազար ֆունտ ստերլինգ. հաղորդում է The Sun-ը:

Այս ամռանը Լոնդոնի «Տոտենհեմից» «Բավարիա» տեղափոխված 30-ամյա ֆուտբոլիստը դեռ չի կարողացել հարմար առանձնատուն վարձակալել:

Քեյնի պայմանագիրը «Բավարիայի» հետ նախատեսված է մինչեւ 2027 թվականի հունիս: Նրա տրանսֆերային արժեքը գնահատվում է 110 միլիոն եվրո:

● *Նոյեմբերի 8-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Սիրելիներից մի՛ բաժանվեք» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Եթե դիմորդները մրցութային հավասար միավորներ են հավաքում, ապա ո՞ւմ է առավելություն տրվում:

Մարգար Պողոսյան (58 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մրցութային հավասար միավորների դեպքում, ըստ հերթականության, առավելություն է տրվում՝

1) բոլոր տարիների մեդալակիր դիմորդներին, 2) արվեստի գծով միջազգային եւ հանրապետական մրցույթների հաղթողներին, 3) դպրոցականների հանրապետական առարկայական օլիմպիադաների առաջին կարգի դիպլոմ ստացած դիմորդներին, 4) Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված, Հայաստանի Հանրապետության բուհերի առկա ուսուցմամբ տվյալ ուսումնական տարվա մասնագիտությունների եւ ընդունելության քննությունների ցանկում բուհի կողմից նշված առաջին մրցութային քննությունից առավել բարձր միավոր ստացած դիմորդներին, 5) դպրոցի պետական ավարտական քննություններից առավելագույն միջին գնահատական ունեցող դիմորդներին, 6) տվյալ մասնագիտությանը համապատասխան միջին մասնագիտական կրթություն ստացած դիմորդներին:

ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տեղեկացնենք, որ փաստաթղթերը ՀՀ ԿԳՆ ներկայացվում են դիմորդի կողմից անձամբ, իսկ եթե դիմողն օտարերկրացի է, ապա տվյալ պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների միջոցով:

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Կարելի՞ է արդյոք արտոնագիր վերցնել կոնկրետ օրերի համար, թե՞ ոչ:

Հասմիկ Կետիկյան (47 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հավելվածի դրույթների 12-րդ կետի համաձայն՝ անհատ ձեռնարկատերերի կամ իրավաբանական անձանց կողմից բացառապես հանդիսությունների, արարողությունների կամ համանման այլ միջոցառումների կազմակերպման համար նախատեսված, Երեւան քաղաքում եւ մարզկենտրոններում՝ 300 մ2 եւ ավելի, այլ քաղաքներում եւ այլ վայրերում՝ 200 մ2 եւ ավելի, սահմանամերձ գյուղերում՝ 100 մ2 եւ ավելի մակերես ունեցող սրահներում հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնելու դեպքում կարող է տրամադրվել արտոնագիր որեւէ ամսվա օրվա կամ օրերի համար:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ «Արտոնագրային վճարների մասին» օրենքի համաձայն՝ յուրաքանչյուր գործունեության տեսակի մասով յուրաքանչյուր ժամանակահատվածի եւ յուրաքանչյուր գործունեության իրականացման վայրի համար տրվում է առանձին արտոնագիր:

Ի դեպ, ընթացիկ տարում արտոնագրային վճար վճարող հանդիսանալուց դադարելու, գործունեությունը դադարեցնելու կամ ժամանակավոր կասեցնելու դեպքերում վճարված արտոնագրային վճարները չեն հաշվանցվում եւ չեն վերադարձվում՝ անկախ այն բանից, թե որ ժամանակահատվածի համար է վճարվել արտոնագրային վճարը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանի պաուերլիֆտինգի հավաքականը 11 մեդալ է նվաճել հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 2-ը Իտալիայի մայրաքաղաք Հռոմում կայացած աշխարհի առաջնությունում:

Հայաստանի հավաքականն աշխարհի առաջնությանը մասնակցել է 12-հոգանոց պատվիրակությամբ եւ նվաճել 9 ոսկե, 2 արծաթե մեդալ: Հայաստանի թիմն ԱԱ-ին մասնակցել է ֆեդերացիայի նախագահ Գագիկ Սարոյանի գլխավորությամբ:

Աշխարհի առաջնությանը 16 երկրի մարզիկներ են մասնակցել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 1 + 6 +13 + 16
Կոտայքի լեռներ	+ 2 + 5 +13 + 16
Կոտայքի նախալեռներ	+ 6 + 8 +18 + 20
Գեղարքունիք	+ 2 + 7 +14 + 17
Լոռի	+ 3 + 7 +14 + 17
Տավուշ	+ 7 + 12 +16 + 20
Արագածոտնի լեռներ	+ 1 + 6 + 9 + 13
Արագածոտնի նախալեռներ	+ 6 + 10 + 16 + 21

Արարատ	+ 6 + 10 +20 + 23
Արմավիր	+ 5 + 8 +20 + 23
Վայոց ձորի լեռներ	+ 3 + 6 +11 + 15
Վայոց ձորի նախալեռներ	+ 6 + 10 +20 + 23
Սյունիքի հովիտներ	+10 + 14 +21 + 25
Սյունիքի նախալեռներ	+ 5 + 10 +16 + 19
ԼՂՀ	+10 + 13 +20 + 24
Երեւան	+ 9 + 11 +23 + 25

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **6.11.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*